

647. Տապանաքար, վրան՝ 3 տող.
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ ԱՐՁԻՄԱՆԵԱՆ / ԾՆ. 1888 ԱՄԻ / , ՎԱԽՃ. 1907:

648. Տապանաքար, վրան՝ 6 տող.
ԱՍՏ ՀԱՆԿ/ՁԻՆ ՈՍԿԵՐՔ / ԵՂԻԱ / ԳԵՈՐԳԵԱՆ ՍԵՐԵՐԵԱԿ/ԵԱՆՑ / . 1907 ԱՄԻ / 15 ՄԱՐՏԻ:

649. Տապանաքար, վրան՝ 2 տող.
ԱՍՏ ՀԱՆԿՁԻՆ ՈՍԿԵՐՔ ԱՊԿԱՌ ՄՕՎՍԵՍԵԱՆ ՇԱՀԳԵԼԴԵԱՆՑ. / ՎՈԽ. 1905 ԱՄԻ, ՕԳՈՍՏՈՍԻ 26-Գ:

650. Տապանաքար, ուղղանկյունաձև. Հյուսիսային կողմին՝ 3 տող.

ԱՍՏ ՀԱՆԳՁԻՆ ՈՍԿԵՐՔ ՀՈՒՇԱՆԱ
ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ ԶԼԱՏԱՐԵԱՆՑ.
ԾՆԴ. 1847Թ ՎԱԽՃԱՆ 1903Թ ՀՈԿՏՑ

ԱՍՏ ՀԱՆԳՁԻՆ ՈՍԿԵՐՔ ՇՈՒՇԱՆԱ /
ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ ԶԼԱՏԱՐԵԱՆՑ / .
/ԾՆԴ. 1847 Թ. ՎԱԽՃԱՆ 1903 Թ.
ՀՈԿՏ. 8-ՄՆ:

Լուսանկ. 181

ՂԶԼԱՐ¹

Թերեքի գետաբերանում գանվող այս քաղաքը հիմնադրվել է 1735 թվականին. աարիների ընթացքում ընդարձակվել և դարձել է առևարական կենտրոն Հյուսիսային Կովկասի, մասնավորապես Դադսաանի, Կարադաջի և Ջեջեն-Ինգուլեթիայի միջև²: Այժմ մասնում է Դադսաանի Հանրապետության վարչա-տարածքային կազմում: Հայերը Ղղլարում բնակություն են հաստատել քաղաքի հիմնադրումից անմիջապես հետո. ղրադվել են հիմնականում գինեգործությամբ (նաև կոնյակի արաագործությամբ), շերամապահությամբ և առևտրով: Մեծ հռչակ է ունեցել աեգիս «Հայկական շուկան»:

1798 թվականի ավալներով Ղղլարում ապրել է 2779 հայ³: Մ. Բժշկյանի շրջագայության ժամանակ Հայ ընտանիքների քանակը հասել է 1000-ի⁴, իսկ 1850-ական թթ.՝ 1200-ի: 1861 թ. վիճակագրությամբ Ղղլարում բնակվում էին 5613 հայեր⁵, որոնք ունեցել են իրենց ազգային գաաարանը և կրթա-մշակութային օջախները: 19-րդ դարի վերջին քաղաքի աղգարնակչության 2/3-ից ավելին կազմում էին հայերը (թվով 6000 հայ): 1981 թվականին ղղլարահայության թիվը շուրջ 4000 էր⁶: Բազմաթիվ հայեր են ապրել Ղղլար քաղաքի նաև. շրջակա գյուղերում՝ Բեքեթիում (70 առև), Մոլախալիում (100 առև), Ղարաջալիում (150

¹ Անդրադառնալով Ղղլար անվան ստուգաբանությանը՝ Ս. Ջալալյանը նշում է բառիս ծագման երկու վարկած. 1. «Վասն արգասաորության տեղում անուանեալ են Ղգլեար, այն է՝ Ոսկիափն» (Ջալալյան, Բ. էջ 444) և 2. Ըստ ավանդության թաթար հրոսակախմբերը ասպատակություններից մեկի ժամանակ գերեվարում են բազմաթիվ հայ աղջիկների՝ խանին ուղարկելու նպատակով: Սակայն ոչ մի աղջիկ չի համաձայնում մասնել խանի հարեմը, և բոլորն էլ մեռվելով գետը՝ խեղդվում են (նույն տեղում):

² Տե՛ս Ա. И. Юхт, Торговля России со странами востока во второй половине XVIII в. и армянское купечество, ИФЖ, 1981, ԼՕ 2, с. 89.

³ ՀՍՀ. Բ. 7, Երևան, 1981, էջ 39:

⁴ Մ. Բժշկյան, էջ 403-404:

⁵ Географическо-статистический словарь Российской империи, сост. П. Семнов, т. 2, СПб, 1865, с. 581.

⁶ Н. Г. Волкова, О расселении армян на Северном Кавказе до начала XX века, ИФЖ, 1966, № 3.

տուն)։ Սարտփանում՝ Ղզլարի արևելյան կողմում - այժմյան Չեչենիայի Շելկովսկայա ստանիցայի մոտօրքում - 60 տուն, Անդրեայում (10 տուն)։

Ղզլարի խոշոր մեծատուններից առավել աչքի են ընկել Տավուշից դադթած Քալանթարյանները, Բոլնիսից՝ Քանանյանները, Ղրիմից՝ Սերերբեկյանցները, Խոջանները և ուրիշներ։

Քաղաքում դործել են Հայկական չորս եկեղեցիներ, որոնցից ոչ մեկն այսօր կանգուն չէ։ Դրանք էին՝

1. Ս. Աստվածամոր վերափոխման եկեղեցի. կառուցված է 1785 թվականից առաջ. փայտաշեն։ Առաջնորդարանը և ծխական դպրոցը եղել են այս ավագ եկեղեցուն կից։

2. Ս. Գրիգոր Լուսավորիչ քարաշեն եկեղեցի. հիմնարկվել է 1812 թվականին, կառուցվել է 15 տարվա ընթացքում և օծվել է 1827 թ. Հովհաննես արքեպիսկոպոսի ջանքերով և մեծահարուստ Բարսեղ Մկրաչի Քալանթարյանի նյութական օժանդակությամբ։

3. Գերեզմանատան փայտաշեն եկեղեցի. կառուցվել է Արելյանց ընտանիքը։

4. Ս. Գևորգ եկեղեցի, որը եղել է Ղզլարահայերի ուխտավայրը¹։

Ղզլարում եղած ժամանակ մեղ պամեցին, որ Ս. Գևորգը կանգուն է եղել մինչև 1936 թվականը և քանդվել է Պողոս-Պետրոս եկեղեցու և վանքի (դանվել է Տոպուկա փողոցի վրա) հետ միաժամանակ։

Հայկական հուշարձաններից Ղզլարում դեռևս մնացել է 18-20-րդ դարերի ընդարձակ դերեղմանոցը, որի առաջնաքարից և կոթողներից շատերը քայքայվել են (Հաակապես կրաքարե կամ ավաղաքարե առաջնաքարերը), իսկ մի մասն էլ ծածկվել է թանձր հողաշերտով։ Ցավոք, դերեղմանոցը բոլորովին անխնամ վիճակում է և, հնարավոր է, մոտակա տարիներին իսպառ ոչնչանա։ Այս իսկ մասավախությամբ մենք որոշեցինք ընդօրինակել 19-րդ դարի և 20-րդ դարի սկզբների հետևյալ վիմադրերը։

ՂԶԼԱՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՐԵԶՄԱՆՈՑ

651. Տապանաքար, ուղղանկյունաձև, դիսամասում փոքր-ինչ լայն, եղրերին՝ 3 առդ. ԳԵՐԵԶՄԱՆ ՄԱՐԵԱՄ ԳԵՈՐ/ԳԵԱՆ ԹՈՒՄԱՆԵԱՆՑ. / ՎԱԽ. 1879 թ. ԴԵԿՏԵՄ. 29։

652. Տապանաքար, նախորդի նմանակությամբ, կողքերին՝ 2 առդ. ՏԱՊԱՆՆ Է ԿԱՏԱՐԻՆԷԻ ՄԿՐՏՁԵԱՆ ԽՈՎՍԻՍԵԱՆՑ. / ԾՆ. 1847 ԱՄԻ. ՎԱԽՃ. 1868 ԱՄԻ։

653. Տապանաքար, նույնակերպ, կողքերին՝ 3 առդ. ԱՍՏ ՀԱՆԳՁԻՆ ՈՍԿԵՐԲ / ՄՕԶԴՈԿՑԻ ՑՈՎՀԱՆՆԷՍ ՎԱՐԹԱՆԵԱՆ / ԽՕԶԱՅԵԱՆՑ. / ՎԱԽՃ. 1901 թ. ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-ԻՆ Ի ՀԱՍՍԿԻ 64 ԱՄԱՑ։

Ծանոթ. «Ամաց»-ը դրված է կցադրով։

654. Տապանաքար, նույնակերպ. եղրերին՝ 3 առդ. ԳԵՐԵԶՄԱՆ ՄԱՐԻԱՄԻ ՄԻՆԱՍ/ԵԱՆ ԽՈՒԵՐԵԱՆՑ. - ԾՆԴ. / 3 ՑՈՒԼԻՍԻ, ՎԱԽՃ. 1887 թ. 10 ՓԵԴՐՎԱՐԻ։

655. Տապանաքար, նույնակերպ. վրան՝ 2 առդ. ՏԱՊԱՆՆ Է ՅԱՐՈՒԹԻՆ ՎԱՐԹԱՆԵԱՆՑԻ. / ՎԱԽՃ. 1878 ԱՄԻ Ի ՀԱՍՍԿԻ 52 ԱՄԱՑ։

656. Տապանաքար, վրան՝ 3 առդ.

¹ Ս. Զալալյան, Բ. էջ 445-446, 448։